

Հավելված

Վանաձոր համայնքի ավագանու

« 18 » ապրիլի 2017թվականի

թիվ 16 - Ն որոշման

## Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

### Վանաձոր համայնքի 2017թվականի բյուջեի 3 ամսվա կատարման վերաբերյալ

Վանաձոր համայնքի 2017թվականի բյուջեն 3 ամսվա կտրվածքով կատարվել է.

ա) Եկամուտների գծով՝ 99.6 տոկոսով, նախատեսված 559131.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 556819.5 հազար դրամ:

- Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 179987.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 178203.9 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 99.0 տոկոսով:
- Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 12292.2 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 12270.7 հազար դրամ կամ կատարվել է 99.8 տոկոսով:
- Պաշտոնական դրամաշնորհների գծով եկամուտները նախատեսված 339942.7 հազար դրամի դիմաց կազմել են 339435.1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.9 տոկոս:
- Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 26909.8 հազար դրամ:

բ) Ծախսերի գծով՝ կատարվել է 80.3 տոկոսով, նախատեսված 559131.7 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 448797.7 հազար դրամ:

#### 1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 535343.7 հազար դրամի դիմաց կազմել են 531259.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.2 տոկոս:

-Վարչական մասի եկամուտներից սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված 170487.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 166424.0 հազար դրամ կամ կատարվել են 97.6 տոկոսով:

-ՏԻՄ-ին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 12292.2 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 12270.7 հազար դրամ կամ կատարվել է 99.8 տոկոսով:

-Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով եկամուտները նախատեսված 339942.7 հազար դրամի դիմաց կազմել են 339942.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 տոկոս:

-Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 12621.8 հազար դրամ:

### **1.1 Հողի հարկ**

Հողի հարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 9485.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 6349.9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 66.9 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 507,4 հազար դրամով:

### **1.2 Գույքահարկ**

Գույքահարկի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 75800,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 79263,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 104,6 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 99,0 հազար դրամով:

### **1.3 Պետական տուրքեր**

Պետական տուրքերի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 5500,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 5829,3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 106,0 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1365,8 հազար դրամով:

### **1.4 Տեղական տուրքեր**

Տեղական տուրքերի գծով եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 15402,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 19846,1 հազար դրամ կամ տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 128,9 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1185,6 հազար դրամով:

### **1.5 Ոչ հարկային եկամուտներ**

Ոչ հարկային եկամուտները նախատեսված 64300,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 55135,7 հազար դրամ կամ կատարվել են 85,7 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 5199,1 հազար դրամով:

### **1.6 Պատվիրակված լիազորություններ**

Պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցները նախատեսված 12292,2 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 12270,7 հազար դրամ կամ կատարվել է 99,8 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 21,5 հազար դրամով:

### **1.7 Ընթացիկ պաշտոնական դրամաշնորհներ**

Ընթացիկ պաշտոնական դրամաշնորհները նախատեսված 339942,7 հազար դրամի դիմաց կազմել են 339942,5 հազար դրամ կամ կատարվել է 100 տոկոսով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 7732,2 հազար դրամով, որից

*1202,7 հազար դրամը նախատեսված է սուբվենցիայի գծով (նպատակաուղղված է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով*

ուսուցման համար), փաստացի մուտքը կազմել է 1202,7 հազար դրամ կամ կատարվել է 100 տոկոսով:

### **1.8 Տարեսկզբի մնացորդը**

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել 12621.8 հազար դրամ:

### **2. Ֆոնդային բյուջեի եկամուտներ**

Ֆոնդային բյուջեի եկամուտները 3 ամսվա համար նախատեսված 23788.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 25560.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 107.5 տոկոս:

- Հողի իրացումից մուտքերը նախատեսված 6000.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 10609.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 176.8 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 1413.8 հազար դրամով:
- Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքերը նախատեսված 3500.0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 1170.3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 33.4 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 455.5 հազար դրամով:
- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 14288.0 հազար դրամ:

### **3. Վարչական բյուջեի ծախսեր**

Վարչական բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 535343.7 հազար դրամի դիմաց կատարվել են 447805.7 հազար դրամով կամ կատարողականը կազմել է 83.6 տոկոս:

### **4. Ֆոնդային բյուջեի ծախսեր**

Ֆոնդային բյուջեի ծախսերը 3 ամսվա համար նախատեսված 23788.0 հազար դրամի դիմաց կատարվել են 992.0 հազար դրամ կամ կատարվել է 4.2 տոկոսով: